Նրանք հաշտուել են իրերի դրութեան հետ, որի մէջ մի կերպ քարշ են տալիս իրենց չարքաշ կեանքը։

—Վարժապետ ջան, աղաչանքս լսիր.—դարձաւ ինձ գիւղի քէդխուդան.—մենք էսիր ենք, դեռ հերու էր, որ մեր աղաները 100 թուման աւելորդ փող առին մեզնից, 50 թուման էլ այս տարի (1918 թ.), իսկ օղչրներս՝ սմենն էլ տարան. չեն թողնում, որ մեր հալալ վաստակը վայելենք, խլում, տանում են ամեն ինչ. նէ հաւատ կայ, նէ օրէնք... և նա այլևս չկարողացաւ շարունակել խօսքը. աչքերը լցուեցին և լռեց։

«Մենք էսիր ենք» կրկնեցի ես մտքումս մեքենայօրէն, այո, պ. Ս-ն շատ ճիշդ կերպով բնորոշեց իրենց գիւղի դրութիւնն իր գիւղացիական պարզ բառերով. և ինձ համար դրանից աւելի ցայտուն, դրանից աւելի համոզեցուցիչ բառեր չէին կարող լինել, որով կարողանայի գաղափար կազմել գիւղի դրութեան մասին։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	87
2	Զուններոր	40
3	Միջակ	40
4	Ուններոր	20
5	Հարուստ	—
	Ընդամենը	187

ԲՈԼՈՐԱՆ

Սա զուտ հայաբնակ մի բաւական մեծ գիւղ է, որ գտնուում է Դաջանից մօտաւորապէս մէկուկէս ֆարսախ հեռաւորութեան վրայ, դէպի հիւսիս-արևմուտք, մի ձորաբլրի վրայ։ Գիւղը բանաստեղծական դիրք ունի. չորս կողմը շրը. Շապատուած է բլուրներով և ապա աւելի հեռու լեռնագագաթներով, որոնք ճոխ են բուսականութեամբ, որոնց միջից հոսում են պաղ և զուլալ աղբիւրներ։ Բնակիչները հաւանական են համարում գաղթած Հարք գաւառի Բլուր գիւղից, այժմ ընդամենը 100 տուն են 820 բնակչով, որից